

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/3

25 հունվարի 2013թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով <Ապարանի ՃՇՇՁ> ԲԲԸ 20.12.2012թ-ի դիմում-բողոքը (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.12.2012թ. թիվ 14506-12) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.08.2012թ-ի թիվ 1002822 հանձնարարագրի համաձայն ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Ապարանի ՃՇՇՁ> ԲԲԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում, որի արդյունքում 11.12.2012թ-ին կազմվել է թիվ 1002822 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

<Ապարանի ՃՇՇՁ> ԲԲԸ-ն ստուգման ակտի դեմ 20.12.2012թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացրել է դիմում-բողոք: Որից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 22.01.2013թ-ի գրությամբ ընկերության տնօրենը բերել է միջնորդություն, որով խնդրել է, որպեսզի վերոգրյալ 20.12.2012թ-ի դիմում-բողոքը թողնվի առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, գտնում է, որ <Ապարանի ՃՇՇՁ> ԲԲԸ 20.12.2012թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

<Ապարանի ՃՇՇՁ> ԲԲԸ 20.12.2012թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ